

ծայրուած անոր: Երուսաղէմի Յունաց Պատրիարքարանի մատենադարանապետ և աւագ սարկաւազ Կղէնպա Քոյիքիլիտէս (յետոյ եպօ. Նազարէթի, բայց այժմ վախճանեալ) միայն 1901 ին ուսումնասիրութիւն մը գրած է անոր նկատմամբ: Այս գերեզմանատունը ստորերկրեայ բնակարան և ընդարձակ քարայր մըն է, ուր փորուած են գերեզմաններ: Գրեթէ 150 մեռելներու անուններ դրոշմուած են նոյն գերեզմաններու առաստաղին ու պատերուն վրայ, հոյակապ մեռելամատենան մը՝ որուն մէջ գրեթէ իւրաքանչիւր անունի քով նշանակուած է մեռելին տիտղոսը, ազգատոհմը, տարիքը և մահուան թուականը, յիշատակելով ամիսը և ընդհիսխը (indiction), բայց ոչ երբեք տարին: Այդ անուններուն մէջ կը գտնուին եպիսկոպոսներ, պարզ վանականներ, նոյն իսկ երեք սարկաւազուհիներ: Յիշատակարանին թուականը գտնելու համար Կղէնպա աւագ սարկաւազը կը զիմէ հնագրութեան (paléographie) և միևնոյն ժամանակ մէջ կը բերէ զանազան պատմական փաստեր, որոնցմէ այս եզրակացութեան կը հասնի թէ նոյն գերեզմանատունը Ե. դարու վախճանէն սկսեալ վանքին յատկացուած էր մինչև ԺԲ. դարու սկիզբը:

Կղէնպայի հրատարակած մենագրութիւնը ունի Ներածութիւն մը՝ ուր կը համառօտէ Քոզիբայի խցական և վանական վիճակներու պատմութիւնը, յետոյ կը գրէ կենսագրութիւնները Քոզիբացի Յովհաննէսին և Գէորգ Կիպրացիին, որոնք վանական այս մեծ կեդրոնին երկու գլխաւոր փառքերը եղած են, և նոյն վանքի վերաբերութեամբ հատուածներ մէջ կը բերէ Յովնանէս Մոսխակն, Կիւրեղ Սկիւրուպոյսեցիին ու Եւագրէն: Գերեզմանատունէն զատ, Կղէնպա կը խօսի Ուասի Քիդդէն Քոզիբա բերուած ջրի ճանապարհի մասին: Ան կը մատնանշէ այլ եւ այլ լեզուով արձանագրութիւններ, որոնց մէկ քանին ասորերէն են և շատ հին կը թուին: Նոյն հեղինակը քանի մը տարի առաջ ալ հրատարակեց Քոզիբայի մէջ գտնուած մոզայիք մը, որ կը կրէր յունարէն արձանագրութիւն մը:

Յարգելի հեղինակին այս ուսումնասիրութիւններէն կը հասկըցուի որ Քոզիբայի գերեզմանատան մէջ թաղուած են զանազան ազգութիւններէն այլ և այլ ննջեցեալներ, որ մահուամբ եղբայրացած ու հոն ամփոփուած են. այսպէս, Հայեր, Իսաւրացիներ, Կիլիկեցիներ, Միջագետացիներ, Արաբներ, Հռովմայեցիներ և